ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ԱՐՇԱԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սարգսյան,

ի պատասխան Ձեր 10.04.2024թ. հ. 98-2024թ. գրության՝ տեղեկացվում է

Երևանի ենթակայության ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայություններ մատուցող բուժհաստատությունների /այսուհետ՝ առողջության կենտրոններ/ բժշկական անձնակազմի /ավագ և միջին բուժաշխատողներ, բաժանմունքի վարիչ, ավագ բուժքույր/ հաշվարկվում է գրանցված բնակչության համար՝ մեկ բնակչի հաշվով հաշվարկված վարձատրման նորմերով, որոնք սահմանված են ՀՀ առողջապահության նախարարի 2019 թվականի փետրվարի 4-ի հ.259-Ն հրամանով հաստատված «Պետության կողմից երաշխավորված անվճար արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող աշխատողների աշխատանքի վարձատրման» ուղեցույցով:

2018-2022 թվականներին առողջության կենտրոնների վարչատնտեսական անձնակազմի աշխատակիցների աշխատավարձերի հիմնական փոփոխությունները պայմանավորված են «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքի փոփոխություններով, 2022 և 2023 թվականներին կատարվել են որոշակի վերանայումներ/բարձրացումներ՝ ելնելով առողջության կենտրոնների ֆինանսական վիճակից, իսկ 2023 թվականին սահմանվել է առողջության կենտրոնների տնօրենների և տնօրենների տեղակալների աշխատավարձերի հաշվարկման նոր սկզբունք, մասնավորապես՝

1. Տնօրենների աշխատավարձը սահմանվում է ըստ գրանցված բնակչության թվաքանակի, ընդ որում՝

- 0-15000 բնակչության դեպքում՝ 450,000.0 ՀՀ դրամ,
- 15001-25000 բնակչության դեպքում՝ 550,000.0 ՀՀ դրամ,
- 25001-35000 բնակչության դեպքում՝ 670,000.0 ՀՀ դրամ,
- 35001-50000 բնակչության դեպքում՝ 750,000.0 ՀՀ դրամ,
- 50001-60000 բնակչության դեպքում՝ 800,000.0 ՀՀ դրամ,
- 60001 և ավել բնակչության դեպքում՝ 900,000.0 ՀՀ դրամ

2. Մասնաճյուղի առկայության դեպքում, տնօրենի վարձատրությունն ավելանում է 50,000.0 ՀՀ դրամով:

3. Բուժական մասով տնօրենների տեղակալների վարձատրությունը սահմանվել է տնօրենի վարձատրության 40-50% չափով՝ ելնելով առողջության կենտրոնի ֆինանսական վիճակից:

Առողջության կենտրոնների կառուցվածքները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատվել են Երևանի քաղաքապետի 2023 թվականի ապրիլի 27-ի հ.958-Ա որոշմամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ